Տէր Դաւթեանը գործում էր հայ գրական ասպարիզում, վրացերէնից բաւական յաջող թարգմանութիւններ և փոխադրութիւններ անելով, որոնցից յայտնի են քանի մի կատակերգութիւններ և խմբագրում էր Ռոստոմաշվիլու վրացերէն հանրագիտական բառարանի հայկական բաւական հարուստ բաժինը։ Դժբախտաբար նա չաւարտեց իւր այդ աշխատութիւնը, այլ մինչև այժմ լոյս է տեսել միայն 4 հատոր։

Նա աշխատակցում էր և հայ թերթերին, վերջերս նաև «Լումայ»ին, իսկ վրացերէն «Կվալի» շաբաթաթերթի մշտական աշխատակիցն էր համարւում, ուր ունի տպած հայ գրականութեան վերաբերեալ բազմաթիւ յօդուածներ։

Հանգուցեալը ծանրաբեռնուած էր մեծ ընտանիքով և նիւթական շատ նեղ վիճակի մէջ էր, որ և անշուշտ նորա մահուան պատճառներից մէկն եղաւ։

Այսպէս անցաւ մի բեղմնաւոր և ապագայ ունեցող կեանք, որ աւելի հալածուած էր քան գնահատուած որոց կողմից որ արժան էր։

Ցաւիտենական հանգիստ դժբաղդ գրական գործչին...

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

«ԼՈՒՄԱՅԻ» ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻՆ։ Խմբագրութիւնը իւր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն անձանց, որոնք հեռագիրներով և նամակներով իրենց խնդակցութիւնն էին յայտնել «Լումայի» երկամեայ դառնալու առթիւ։

ՔԻՇՆԵՒ Կրպէին. յօդուածը ստացանք. կաշխատենք տպել միւս համարում։

ԱԽԱԼՑԽԱ. Ն. Մեծատուրեանցին։ Ձեր ուղարկած Ս. Նազարեանի նամակները կտպագրուին հետևեալ համարներում։

ՄՈՒՐՃԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. «Լումայի» մասին մի խմբագրական նկատողութիւն էք տպել «Մուրճի» նոյեմբերի համարում, չռայլելով մեր հասցէին «կղերական» «տէրտէրական» և այլ անմիտ խօսքեր։ Մենք չգիտենք թէ ինչ կապ ունի մեր կոչումը գրական այս կամ այն խնդիրների հետ, այն ժամանակ մենք էլ պէտք է իրաւունք ունենայինք ասել, որ նաւթային գործերը և վաճառականութիւնն սկսել են՝ ազդեցութիւն ունենալ գրական

ասպարիզում, որովհետև եթէ «Լումայ»ի խմբագիրը հոգեորական է, «Մուրճ»ի այժմեան խմբագիրը վաճառական է։ Ասում էք թէ «Լումայն» պասքվիլներ է տպում։ Այս բոլորն ասում էք. բայց ուր են ապացոյցները։ «Լումայն» երբէք պասքվիլ չէ տպել։ Ձեր բարեհաճ կամքն է ամեն մի յօդուածում պասքվիլ տեսնել։ Պասքվիլներ խնդրեմ որոնէք Լ.-ի «կիրակնօրեայ զրոյցներում» և Վերձինի «մանրանկարներում»։ Իսկ թէ ինչ են նշանակում «Լումայում» յիշուած «մի այլ Լ. կամ ո գիտէ նոյն լեւն, 900 ա. հաշիւ ունի տալու՝ մի աղքատիկ վարժարանի» խօսքերը, կըպատասխանենք մի այլ համարում։

Քաղցր պարտք եմ համարում երախտագէտ սրտով շնորհակալութիւնս յայտնել այն բոլոր յարգելի հոգեւորական եւ աշխարհական անձերին եւ հաստատութիւններին, որոնք պատիւ արին ինձ անձամբ, հեռագիրներով, նամակներով եւ պատգամաւորութիւններով շնորհաւորել իմ գրական համեստ գործունէութեան 25 ամեակը:

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆ